

## ԲԱՆԱՍԻՐԾԿԱՆ

### ՆԱՐԵԿԱՑԻՆ

ՏԻ

ՀԵՏԱԳԱՅ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Նարեկացու նկատմամբ միանգամայն իրաւացի էին իրենց վերաբերմունքով և գնահատականով մեր այն բանաստեղծները, որոնք բուռն ճգում էին հանդէս բերում հասնելու ստեղծագործութեան մարդկային խորութեան, ծեր կատարելութեան, ստանաւորի պոէտիկական հնարանքների բազմազանութեան, երաժշտականութեան և լիզուի հարատութեան, ինչպէս, օրինակ՝ թուանինը, իսահակեանը, Տէրեանը, Մէծարենցը, Վարուժանը և ուրիշներ։ Նրանք վերին աստիճանի բարձր ճաշակով բանաստեղծներ էին, որոնք իւրացրել էին մարդկութեան ստեղծած պոէզիայի կուլտուրի գրական կողմերը։ Թւում է, թէ համաշխարհային բանաստեղծական արուեստի ստեղծած նորութիւններին և բոլոր նրութիւններին հրաշալի տեղեակ այգօրինակ գրական խոչոր գէմքերը չպէտք է հետաքրքրուեին իր ամրող կենքը գիւղում անցկացրած Փ. Գարի մի բանաստեղծում, թւում է, թէ նարեկացին նրանց համար պէտք է արդէն մի հնացած գրող համարուեր, բայց այդպէս չէ։

Այն ժամանակ, երբ շատերը հիսանում էին Վելունով՝ իրեն թէ մի անշանաւոր նովատորուց, մեր բանաստեղծների աչքի առաջ բարձրանում է իր ամրող հասակով նարեկացու վիթխարի կերպարը։ Մեր առաջաւոր բանաստեղծները չեին կարող չնատել, որ այն բան գովարանուած գիռուեների պոէզիայի աշխատը բերած օնորութիւնները (յատկապէս ստանաւորի երաժշտականութիւնը) շատ գարեր առաջ արդէն յայտնագործել էր Գրիգոր Նարեկացին և ոչ միայն յայտնագործել, այլև ստեղծել էր բավանդագութեամբ հարուստ և առողջ (և ոչ նրանց նման կիւնանդային) մի շարք կատակ բանաստեղծական նմուշներ, նարեկացու արժանիքները այսպէս մի-

ջազգային գրականութեան ֆոնի վրայ աւելի լաւ նանաչուելուց յետոյ, մեր բանաստեղծները սկսում են եռանդագին ուսումնասիրել նրան ու սովորել նրանից։ Միսաք Մէծարենցի մասին կենսագիրները պատմում են, որ նա Մատեանը միշտ բարձի տակ էր պահում, իսկ Տէրեանին պատկանող գրքերից մացել է մի նարեկ, որի լուսանցքներին բանաստեղծը բազմաթիւ դիտողութիւններ է գրել (\*). Մէծարենցի ու Տէրեանի նման, զարասկզիրի մեր միւս խոչոր բանաստեղծները նոյնպէս շատ են սիրել նարեկացուն և ուսումնասիրել նրան։ Վերեւում յիշատակուած մեր նշանաւոր բանաստեղծների ստեղծագործութիւնների օրինակով տեսնենք, թէ ի՞նչ բնոյթի գրական կատար են գոյութիւն ունեցել այդ բանաստեղծների և նարեկացու միջեւ։

Նարեկացու հետ ստեղծագործութեան որոշ կողմերով կապուածութեան մասին ամենաշօշաբելի ե առաջին հայեացքից խիկ նկատելի փաստեր է տալիս Միսաք Մէծարենցը ոչ միայն իր բանաստեղծութիւններով, այլև իր մի շարք պոլեմիկական փայտական բառուն արուեստով գրուած յօրուածներով։

Երբ լոյս է տանում Մէծարենցի ա՛ջիածնա գերնացքով բանաստեղծութիւնների ժողովածուն, քննադատութեան մէջ զբանը ընթառում են մարգիկ, որոնք խիստ յարձակումներ են գործում բանաստեղծի վրայ, նրան անուանելով ածիծազելի կապկոզ, այժմիքն գտնելով՝ որ նա իր թէ ազգային բանաստեղծ է, ինքնուրոյն չէ։ Նրանք Մէծարենցին համարում են ֆրանսիական սիմվոլիսմաներին հետեւող և կրկնող Ակրսում է մի սուր բանակիւ։ Մէծարենցը իր յօրուածներու հմտորէն ետ է մզում այդ յարձակումները և ցոյց է տալիս իրին քննադատութիւնների ոգիտութիւններ պոէտիկական իւրացանակութիւնները ճանաչելու հարցում, և այսուհետեւ մեզ համար հետաքրքրական այն է, որ իր տեսակետները կիմնաւորելու համար նա անընդհանուր վկայակուում է Գրիգոր Նարեկացուն։ Ահա մի հասուած նրա՝ իր հակուակորդ ենովք Արմէնի

(\*) Այդ մասին մեզ յայտնել է Պրոփ. Գ. Կոստիկեանը, որի մօտ գտնւում է Աղջքերգութեան Մատեանի նշուած օրինակը։

զէմ գրած ո՞ննագատութիւնըն վերնագրով  
յօդուածից:

«Տակաւին պահեստի գիտողութիւն մըն  
ալ ունի Ենովք Արմէն. և Արեին բանաս-  
տեղ ձութեան մէջ սա երկտողը կայ.

Թող հագուսյ մէջն անցնին կարգաւ  
Մանուկենք բնդարմացած.

Այս տողերն ալ հպելով իր խարտոցին,  
Ենովք Արմէն պիտի գոչէր. «Ե՞նչ, Հոգիին  
մէջ մանուկ կրնա՞յ ըլլալ։ Որովհետեւ՝  
նովք Արմէնի միտքը ընդհանրապէս գրա-  
կանութեան, ու մասնաւորապէս բանաս-  
տեղ ձութեան անընդունակ միտք մըն է.  
ու չի կրնար իմաստի պատիկ կրճատումները  
լայնել ու հասկանալ անմիջապէս, թէ, ո-  
րինակի համար մանուկը տմփով փոխարե-  
րութիւնն է հոս մանուկ զգացումներուն,  
տեհնէրուն, յոշերուն, բաղանքներուն  
որոնք երկար տաեն ընդարձացած՝ արեին  
կենսարաշխ ճառագայթներուն պէտք ունին  
վերաթափուելու համար։ Խնչ դժբախտու-  
թիւն պիտի ըլլար, եթէ բոլոր հասկացողու-  
թիւնները Ենովք Արմէնի պէս անձկանային.  
այն ատեն հարկ պիտի ըլլար մեր գրական  
հսկային՝ Նարեկացիին (ընդգծումը մերն է — Մ. Մ.) փոխարերութիւններուն ալ  
զատավճիռը կարգալ («Յուրզառ կինաց»,  
«Մանգաղ կամաց», «Անկողին կամաց»):

«Ենովք Արմէն կ'ուզէ անպատճառ իմեր  
մտակոյր ու պանդոյր տարփող մը գանել  
իմ մէջս, մանաւանդ բառամոլ խորհրդա-  
նշական մը, ծիծալիլ կապկոյ մը։ Եւ ո-  
րովհետեւ սկիզբէն ի վեր գրիթէ բնազգա-  
րար, և հիմակ բացորչակի, իմ գրական  
մեծազոյն մտահոգութիւնն եղած է զպրոցի  
անհան պիտակումներուն յիմարական հե-  
տավարող մը չըլլալ և խուսափել արտա-  
քին ազդեցութեանց նուաստացուցիչ դրոշ-  
մէն, մէկ խօսքով կարելի եղածին չափ  
իմզիկնա ըլլալ՝ ուժգնորէն կ'ընդգվիմ Ե-  
նովք Արմէնի այդ անմտած վերագրութեան  
դէմ։ Ու բարբառուն ապացոյց մը տալու  
համար քէ սինպոլիսը կրնայ ստացական  
չըլլալ՝ դարձեալ մէջ կը բերեմ պանձարի  
Նարեկացիին օրինակը» (\*): (Ընդգծումը  
մերն է — Մ. Մ.):

(\*) Մ. Մեծարենց, Գերթուածներ, Երևան,  
1934, էջ 249։

Այս հատուածից երեսում է, որ Մեծա-  
րենցը բանաստեղծաթիւն մէջ լայն չափե-  
րով կիրառելով վոլխաբերութիւնը, զա հա-  
մարում է ոչ թէ սիմվոլիստաներից ծագած  
մի մերժելի նորութիւն, այլ ընդհանրապէս  
ֆնարիքութիւն համար անհրաժեշտ մի  
քան, որ սիմվոլիստաներից շատ տաաջ գոր-  
ծածել է մեր գրական հական՝ Նարեկացին։  
Այսպիսով, Մեծարենցը փաստորէն խոսառ-  
վանում է, որ ստեղծագործելիս աչքի  
տուաջ է ունեցել Նարեկացուն և սովորել  
է նրանից։ Այսուհետեւ այս նոյն եղակա-  
ցութիւնը կարելի է բիսեցնել նաև այս րա-  
նից, որ երբ նա ժիմանկով իր մատ սիմվո-  
լիկ պատկերների գործածութիւնը ստացա-  
կան արտաքին ազգիցութիւնների արգիւնք  
մինելը, այս համարում է ինքնուրսյն և  
բնականաբար առաջացած, իրեն նման ե-  
րկոյթի հնարաւորութեան օրինակ՝ նորից  
մատնացոյց է անում Նարեկացու ստեղծա-  
գործութիւնը։

Ի հարկէ, միայն փոխարերութիւնների  
և սիմվոլիկ պատկերների գործածութեամբ  
չի սպառուում Նարեկացու պոտեհկական  
կուլտուրայից Մեծարենցը ուսումնառու-  
թիւնը. կան և աւելի կարեոր հանգամանք-  
ներ, որոնք վերաբերում են նաև բա-  
նաստեղծութիւնների բովանդակութեանը։  
Դրանցից մէկը մարդուն բնութիւն հատ  
անմիջական հազորդակցութեամբ ներկա-  
ցացին է, մարդկային կզացմունքները  
բնութեան պատկերների հետ զուգորդելն է։  
Այս զուգորդումը ինքը Մեծարենցը յօպ-  
ուածներից մէկում համարում է բանաս-  
տեղծական կատարելութեան հանիելու  
ձգտման արտայայտութիւն և յայտաբառում  
է, որ ինքը ամէն կերպ ջանք է գործազրել  
ոչ թէ իսկել մարդկանց և իրերի յարաբե-  
րութիւնները, այլ ամրապնդել զրանք։

Եւ իրօք, երբ Մեծարենցը օնիքնադա-  
տութեան փորձ մը յօպուածում վերլուծ-  
ման է հնիտարկում իր սեփական ստեղծա-  
գործութիւնները («Միածան» վերնագրով  
բանաստեղծութիւնների տուաջին ժողովա-  
ծուն), սքանչելի կերպով բացայալում է  
պոէտիկական իր այդ տեսութիւնն գործնա-  
կան իրականացումը։ Եւ սրովհետեւ այդ  
տեսութեան պատմական հիմնարման հա-  
մար Մեծարենցը դարձեալ հնարաւոր էր

որ Նարեկացու օրինակին դիմեր, ուստի զարմանալի է, որ երբ նա իր տաղերն է վերլուծում, երբեմն թւում է, թէ Մատուհանի մոտիվների մասին է խօսում: Նմուշի համար Մեծարենցի նշուած յօդուածից մէջ բերենք մի քանի հաստուածներ. «Գիշերերգութիւնները, լուսաւէտ կամ մթասուուեր, երկար տողանցք մը կը գծին ամբողջ հատորին մէջ, Գիշերը երկար ատեն իր ազգեցութեան, իր ինանդաղատանքին մէջ պահած է բանսաստեղծը»:

Ակիզբները բաղր ու զուարը և անոր գրանքը.

Գիշերն անու է, զիշերն հետաղին ...

Գիշերին մէջ չէ՞ ապաքէն, որ երազները աւելի վառ ու արագ վերթեառներ կ'ունենան. գիշերին մէջ, ուր ըրջանկարը այնքան հմայիչ կ'ըլլայ, և սպասում՝ այնքան քաղցրօքէն՝ տաժանազին.

Մուր սենեակիս մէջ կը տրջիմ առջի համբորն անցելին

Ու օրունեներս են բոցալառ՝ ջերմութենեն երազային,

Փակ են աշերս, եւ կամ յանկարձ մերը անհամեթե գուրս կը նային,

Ահ, լուրիւն որ կը տեւէ, եւ սուսերնեն՝ որ կը բալին ...

Բայց գիտեռուսն սերը միւս կը վերածալիքի ...

Ու այդ սէրը կ'երկարագուի մինչև պաշտամունք. և այդ պաշտամունքը այնքան խանգուտ է, որ բանսաստեղծը կ'ուգէ նոյնիսկ գիշերին յաւիտենութիւնը, բացարձակ անկապտելի աստուածութիւնը.

Կ'ուղեմ որ դադրին ճայներն այս պատիք, ու նեկաւիդ զողի ըմպեմ ես անյազ. Կ'ուղեմ որ դադրին տիւ եւ ժամանակ ու դարիւներուկ իյնան ծնրադիք:

Եհոյոյ երկիւզած աղերսանք մըն ալ.

Ցնորաբեր գիտեր, ան, ընդունե զիս.

Ցիդունէ, միստիկ ով անդուրութիւն ...

Բայց վերջապէս կու գայ ատեն մը՝ որ գիշերներու այս տարփանքը ժամանակ մը տեղ կու տայ արեին ու տիւին հրայրքին,

Պիտի բմպեմ բոցի արեւին, նառ պայքի եւ ծարաւի ... :

Ամբողջ հատորը գրեթէ սպասման երկարաձիք գիշերի մըն է, աղերսանքներով, հոգսերով, ցաւերով ու երբեմն ալ կայծակլտուն յոյսերով լեցուն ...»(\*):

Այս բոլորը ցոյց են տալիս նաև, որ Մեծարենցը իր սեփական ժողովածուով սուլթանական մզաւանջային իրականութեանը հակագրուելով, ասրեի տիւը ու հրայրքը երազելով հանգերձ, որոշ չափով արտայայտել է նաև միստիկական տրամադրութիւններ, որնք, ի հարկէ, բացառական երեսոյթ են. Այլ բան է, երբ Մեծարենցը օգտագործում է Նարեկացու պուտիկական կուլտուրան:

Մահուանից երեք ամիս առաջ զրած իր «Եհուամաց Բարեկինդան» վերնագրով յօդուածում Մեծարենցը պատասխանիրով իր նողկալի հակառակորդներից մէկին (Փալլակին), գրում է նաև հնուեալը. «Դիտելի է, որ Փալլակի իրք անճաշակ դատապարտած բասերը՝ առաւելապէս նախինթաց մատինագրութեան մէջ գործածուածներն են ... ինչո՞ւ չիսոստվանիլ թէ տղեղութիւնն այդ բառերը ծամածուող ըլթուունքին, և անոնց ուժեղ մերձեցումին տոկալու անկարող՝ իգացեալ, ուժասպառ լսելիք մէջ է. այդ բառերը գործածող նախին մատինագրերը մենէ շատ աւելի լայն կ'ըմբռնէին լսելութեան և առողանութեան գեղեցիկը, — գիտէին վեհաշուրթ արտասանել բառերը, ու լսել անոնց վեհանդուր ձայնը. իսկ ի՞նչ զիտեն Փալլակիները. ոչինչ, ո՞չ իսկ իրենց տգիտութիւնը, նախին մատինագրերը գիտէր ծովածայն հնչեցնել բառերը. —

«Զիա՞րդ բաւեսց դոյզն ինչ աղջամուղ՝ մեծիդ նառազայրից, զիա՞րդ նամբարձցի կօւսնցի ընդ խոչի բայց՝ խակուրքին նետութեան մարմնոյս պիտութեան ...

— Ընկալ բայցըրեամբ, Տեր Ասուած նզօր, զգանեացոյիս զալաչան ...»:

Գիտէր ծիծաղախտ ժպտեցնե՞լ բառերը. —

«Ելիքն ծով ի ծով ծիծաղախտ ժաւալանայր ...»

Եթէ գիտնար Փալլակ Նարեկացիին այս

(\*) Մ. Մեծարենց, Երկերի Լիակատար ժողովածու, Երևան, 1934, էջ 243:

նմանաձայնութիւնը, գուցեւ չծաղրէր իմինս՝ որ չքնազ բան մ'ըլլալու յաւակնութիւնը չունի, բայց ունի անճաշակ որակութիւն զէմ բողոքելու արժանապատռութիւնը. —

Արև ծիծառզօի, ձևազօրիկ ծամերում(1):

Մեծարենցը ոտանաւորը երաժշտական դարձնելու համար լայնօրէն կիրառում է բաղաձայնոյթները: Իր շրջանի մեր բանաստեղծներից նա, Տէրեանի հետ միասին, առաջինն է ոտանաւորի այդ կողմի վրայ մեծ ուշագրութիւն գարձնում: Ինչպէս փաստերը ցոյց են տալիս, նա, չնայած ինքնատիպ լինելու իր ամրոգջ ձգտման, այնուամենայնիւ չի ցանկացի հրաժարուել նարեկացու յայտնագործութիւններից և իր խոկ խոստովանութեամբ օգտագործել է դրանք: Այսպէս, նրա բանաստեղծութիւններում առատօրէն հանդիպում են նարեկացիական ս, ո, է, ծ բաղաձայններով առաջարկած բաղաձայնոյթները. ահա ոռզ կազմուած բաղաձայնոյթի մի քանի նմուշ:

Գիշերն սննուե է, գիշերն նեւըալին հաշիով օծուե ու բալասանով(2):

Կարնածայիկ ու կապերակ զիշերին մեջ, Սեղեսիկի փոքի մըուեն ըլլալ ըսփիւր ... (3):

Նոյն և ծով կազմուած.

Նոյւոյս դափ ու բմբուկի  
Կիզնէ ծիծալիս այս զիշեր,  
Ծնձլաներու պէս ցնուեն:  
Մափ կը զարենն իմ յուշեր(4):

Կապոյս ծովից, ծիծան, ծփուն ձայներ, միսիրկ վարգ(5):

Բայց պէտք է նկատել, որ Մեծարենցը մեր այն բանաստեղծներից է, որ ամենից աւելի շատ բան է աւելացրել հնուց արգէն յայտնի և գործածական բաղաձայնոյթների վրայ: Այսպէս նրա մօտ յաճախ են հանդիպում նաև լով, զով, ձով, ձով և յատկապէս նով կառուցուած բաղաձայնոյթներ: Վերջինի վրայ Մեծարենցը մի առանձին ուշագրութիւն է գարձնում՝ ստացուազ երա-

ժըշտական տպաւորութիւնը շատ բարձր գնահատելով:

Նաւակներ մեկնեցոն ամենն ալ, բաղաձանեն ալ ակաղնուն ...

Սակայն չի կարելի, իսկապէս, չխռոս տովանել, որ այս նով բաղաձայնոյթները իրենց կլասիկ կիրառումն են գտել Տէրեանի բանաստեղծութիւնների մէջ: Տէրեանը ներով բաղաձայնոյթը առանձնապէս նկատելի է գարձնում զուգորդելով մ բաղաձայնի հետ և վարպետորէն այնպէս դասաւորելով, որ այդ բաղաձայնները ընկնեն ուռւ կամ ուս ձայնաւորներից յետոյ՝ բառացիքը ջետոյ:

Ձեռներում ձեր մսերիկ նուազուն,  
Ձեր ձայնում, երբ տամ եք «Տէրեան»...  
Նայիրենսն ե երգում ննօրեան ... (6)

Պիտի նշել, որ Տէրեանը առհասարակ աւելի իր պոտէտիկական կուլտուրայով է կապուած նարեկացու հետ. յիշենք նրա նշանաւոր անշուկ ու նըշիւն բանաստեղծութիւնը, որ ներով ստեղծուած նմանաձայնութեան կիրառման մի սքանչելի նմուշ է հանդիպանում:

Ինչպէս Մեծարենցի, այնպէս էլ ի. զարք սկզբների մեր միւս բանաստեղծների սէրը գէպի նարեկացին և կապերը նրա հետ արգիւնք չեն միայն պոտէտիկական կուլտուրայու բնագաւառում նրանց զիտակցուած ուռումնաւութիւն բնական անհրաժշտութեան: Յատկապէս այդ շրջանի մեր բանաստեղծների համար նարեկացին նարազատ մի գրող էր գտրձել նաև շնորհիւ իր ստեղծագործութիւնն ըովանդակութեան մի շարք դրական գծերի:

Ամբողջ խնդիրն այն է, որ այդ ժամանակաշրջանի մեր առաջաւոր լաւագոյն բանաստեղծները չէին կարող սառը և անտարբեր գիտել այս բանը, թէ ինչպէս է տնտեսապէս ու հոգեպէս ճնշւում ժողովուրդը սուլթանական բարբարոսական կարգերի և ցարական ու ակացիայի ու բուրժուական կեղեցման պայմաններում, և թէ առհասարակ, զնալով ինչպիսի ծանր գրու-

(1) Նոյն, էջ 277-278: (2) Նոյն, էջ 7:

(3) Նոյն, էջ 75: (4) Նոյն, էջ 8:

(5) Նոյն, էջ 23:

(6) Վ. Տէրեան, Բանաստեղծութիւններ, Երևան, 1940, էջ 264:

թեան մէջ է ընկնում աշխատաւորութիւնը: Նրանք տեսնում էին, թէ ինչպէս մարդիկ այդ պայմաններում ընկնում էին և մարդու կերպից և դառնում ասրիմ չար դժիսին (Թումաննեանի խօսքերն են), թէ ինչպէս մարդը փոքրանում է զառնում է զգացմունքներով սահմանափակ, թէ ինչպէս բռնութիւնը խեղում է և վայր հակում մարդկային հոգու ազատ թունչքը: Այս բոլորը զգալի էին մահաւոնդ սուլթանական տիրապետութեան սահմաններում ապրող արևմտահայ բանաստեղծների համար, որոնց գլխին կախուած էր միշտ նաև ֆրազիական գոյութեան անապահովութեան սուրբ:

Այսպիսի պարագաներում մեր նոր պուէզիաֆի հիմնական թեմաներից մէկն է զառնում (դեռ նոյնիսկ Դուրեհանից սկսած) մարդու մէջ մարդկայինի զարգացման հարցը: Դուրեհանը, որը մեծ համարձակութեամբ ատտերի սունելի սանդուղքը բարձրանալով՝ Աստծոն կեանքի ամենագնառական պահանջ է ներկայացնում («Տրտունչքը»), իր ստեղծագործութեան մէջ շարունակ զանգաւում էր մարդկանց՝ իր նկատմամբ ունեցած ոչ մարդկային փերարերմունքից:

Մեր բանաստեղծներից շատերը հանդէս են գալիք որպէս աշխատաւոր մարդու լուսապայի համար պայքարողներ, մի ապազայի, երբ պէտք է նաեւ մարդու մէջ զարգանաւ ու յալրէն մարդկայինը: Իսկ յայսնի է, որ Նարեկացու ողբերգութեան էական գծերից մէկն էր ծգուումը՝ մարդուն իր հոգեկան աշխարհով բարձրացնել այնպիսի սահմաններ, որտեղ նա պիտի հաւասարուէր կատարելութեան ազամափարապատկեր հանդիսացող Աստծու հետ: Ուրեմն բացառած չէր այն հանգամանքը, որ այդ ըըրջանի մեր բանաստեղծներին նետաքրքրէր նաև Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութեան որոշ կողմիրը:

Մեր գեղոկրատ բանաստեղծները բարձրանալու մզձաւանջային իրականութիւնից և իրենց ըրջապատող՝ շատ ճշճիմ անձնաւորութիւններից, երազում էին մարդու համար երջանիկը, լաւը, երազում ու ներկայացնում էին ազնիւ ու մահու մարդուն, որը նեղ անձնական չէ, սահմանափակ չէ և ապրում է աշխատաւորութեան կեանքով,

հասարակական մեծ կեանքով: Հասկանալի է, որ բանաստեղծների այսպիսի պատկերացութերը չէին կարող երթեմն չշփուել Նարեկացու ամատեան Ողբերգութեան պոէմում ստեղծուած լիրիկական հերոսի մարդկայնորէն խոր ու պայծառ կերպարի հետ:

Արևմտահայ բանաստեղծներից Նարեկացու ստեղծագործութեան բարդիցիաները նկատիի չափերով օգտագործել են նաև Վարուժանու Սիամանթօն:

Դանիէլ Վարուժանը ունի մի քանի այնպիսի բանաստեղծութիւններ, որոնք պոէտիկական շատ կողմերով լիշեցնում են Նարեկը (իշենք գրանցից սնանապարհ Խաչի գերագույղ՝ աղօթքի ձևով ու սնով գրուած բանաստեղծութիւնը), այլ գործերում պատահում են և ուղղակի Նարեկացիական արտայայտութիւններ, ինչպէս՝

... Միսիս նեննեւն, արփա բուրգան հունեան ...<sup>(1)</sup>

Բայց աւելի հետաքրքրականն այն է, որ Վարուժանի բանաստեղծութիւնները մէջ կան այնպիսիները, որոնք իրենց մատիվներով, իրենց բովանդակութեամբ ևս լիշեցնում են Ողբերգութեան Մատեանոց: Վարուժանը մարդկային բնաւորութեան մաքրութեան ու մեծութեան որոնողներից ու ձգտողներից էր, ուստի նա երգել է լոյսը, որպէս այդ բուրոիք այլարանական խտացումը.

Կ'երբամ աղբիւը լոյսին ...  
Աւզին եւկար է, սպարկուած է ուղին Կայձարերով, ցանկուած՝ մորտի փուտերով. Ուղին տեղ է նառապայիք մնանգութեակ: Անկ կ'ելլեմ! յենով գողիոց ծունգերուս, ծե ծունգերիս, զոր զամեցին եղբայնեւս, Արիւնս տաք կը բոյսի:

Նենն է կուրծիս, բարիշներու վեալ՝ փա-

թին:

Ու ես կ'երբամ գեափի աղբիւը լոյսին ...<sup>(2)</sup>

Բանաստեղծը ծանր տանջալից ուղիւ պէտք է անցնի լոյսի ազրիւրին հասնելու համար, որպէսզի լոյսով լեցնի սրտի դա-

(1) Դ. Վարուժան, Հեթանոս Երգեր, հ. Պուիս, 1912, էջ 206:

(2) Նոյն, էջ 173:

տարկ սափորը, որովհետեւ լոյսն իր սմաքի հարսն էս և տափագրքի բերկութեան զիհնին։ Արգեօք այս գեղցիկ բանաստեղծութիւնը իր որոշ կողմերով նարեկի մի մանրանկարը չի յիշեցնում . . .

Ինչ զերաբերում է Սիամանթօյին, ապա պէտք է ասել, որ նո, ինչպէս նարեկացին, գրել է գերազանցապէս խառը ոտանաւորներով։ Յետոյ նա մեր յայտնի բանաստեղծներից ամենից աւելի հակուած լինելով դէպի սիմվոլիզմը, ամենից աւելի շատ է գործածել փոխաբերութիւններ և այլարանութիւններ։

Նարեկացու պոտիկական արուեստի ոգին Սիամանթօյի մօտ առաւելապէս երեւան է գալիս փոխարերական պատկերների կերտման ընթացքում։ Յաճախ պատահում են այնպիսի փոխարերութիւններ, որոնք, թուում է թէ, ստեղծուած են նարեկացու փոխարերութիւնների անալոգիայով։ օրինակ՝ նարեկի «Մի տասցես ինձ ստիճն աշաց ցամաքեալ» արտայայտութեան ոռով Սիամանթօն ունի այսպիսի արտայայտութիւններ. . . Յոյսին ստիճնքները յափրացումն էին չըթանքներուն . . . կամ. . . Մի մոռանար, անոր աչուցներն ու բերանը . . . ընդգումի ստիճնքներուն կարկառելուն։

Բայց պէտք է մի բան անպայման նկատել. թէպէտ առաջին հայեացքից թուում է, թէ Սիամանթօն շատ է նմանւում նարեկացուն, սակայն դա այնքան էլ ճիշգ չէ։ Սիամանթօյի պատկերաւորման արուեստի մէջ կայ որոշ հիւանդագին տարր, որը միանգամայն խորթ է նարեկացուն։ Այդ տարրը պատկերների մզձաւանջային խիս գոյներն են, որոնցով բանաստեղծը ցանկանում է քստմեցնելով ապրումներ առաջացնել ընթերցողի մէջ։ օրինակ՝

Նրէ կրնաս, աննօննօրէն յեսիք դարձիր  
Ու տես մեռելներուն հողին ժայրեւուն  
յանկարծական։

Կամ՝

Օ, օգնութեան եկեմ, զլիսառւած մարմիններ գեզի զիս կ'արօաւեն։

Գրական հետաքրքիր երեսոյթ է Սիամանթօյի «Սուրբ Սեսրոպ» լիրիկական պոէմը. բանաստեղծը իր այս գործը աշխատել է սճաւորել միջնադարեան պոէմ-

ների և հկեղեցական բանաստեղծութիւնների տիպով, և ինչ ասել կ'ուզէ, որ առաջին հերթին նա աչքի առաջ է ունեցել նարեկը։ Այս բանը առանձնապէս երկում է պոէմի ներբողական մասերից և Մեսրոպի աղօթքից, որից մի կտոր մէջ բերենք։

Օգնե ինձի, Տարբերու հայր,  
Նս աչք ալօս եւ տեսողութիւն անբախանց,  
Անայնամիտ ունկնդիր եւ շարալուր ականջ,  
Աններդանակ երածիւօս եւ մեղաձայն եր-  
գիզ . . .

Նս անհողագործ դաշտորա, տեմարան բա-  
վուր,

Սեղանասպաս անհաց եւ ցամաքեալ զինե-  
բաւու,

Նս՝ անկոչ երաւիրեալ թիսուսական հար-  
սանիքին,

Նս անձեր լուսարա եւ անմատեան մատող . . .

Քու փրկութեան փարոսներէդ կարիլ մը լոյս  
տուր ինձի.

Եւ երկնային դուռներուդ հետ հոգեկան  
Կեանիքն դռները դրախտին պէս րոդ բաց-  
ուին . . . (1)

Միայն այս փոքր հատուածը արդէն ցոյց է տալիս, որ Սիամանթօն ոչ միայն նարեկի ոռն է օգտագործել իր պոէմը գրելիս, այլև ուղղակի այնտեղ գործած արտայայտութիւններից շատերը։ Սիամանթօյի այս պոէմի մասին իր ժամանակին Վարուժանը գրել է. «Սիամանթօն իր այս քերթուածին մէջ տուալ իրեն համար նոր ձև մը քերթելու, որ իր միւս երկերուն մէջ հազիր կ'ուրուագծուէր. այս՝ զինքը նարեկացին հետ կապող թելն էր՝ զոր ամրակուռ չզթայի մը վերածեց» (2)։

Մ. ՄԿՐԵԱՆ

(Մնացեալը յաջորդին՝ 18)

(1) Սիամանթօն, Սուրբ Մեսրոպ, Թիֆլիս, 1913,  
էջ 15 - 16.

(2) Դանիէլ Վարուժան, Երկեր, Երևան, 1946,  
էջ 373։